

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱԼԱԹԻ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՎԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ
ՍԱԱՑՈՒՄԸ ԵՒ ՎԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

(Երեխաւրիւրամեայ Յոբելեանին առքիւ)

Կ. Պոլսի, Պալաթ թաղին Ա. Հրեշտակապետ եկեղեցին պատմական հաստատութիւն մէկ։ Անոր ստացման և առաջին վերաշնուրթեան հեղինակ վաստակաւոր հեղեղականին ինքնուրթեան մասին քսան տարի տուած կարեոր լուսաբանութիւնները հրատարակուեցան, յայտնելով նաև նոյն եկեղեցւոյ ծանօթ յիշատակարանին իսկական գրիչը։ Այս տարի եկեղեցիին թաղական խորհուրդը կը փափաքի երեքհարիւրամեայ Յոբելեանով մը տօնել և պանծացը նել եկեղեցիին բուն վաստակաւորին մեծադրութիւնը։ Այս օրերուն կարգացի, ինչպէս պիտի պարզեմ ստորե, բարձրաստիւճան եկեղեցականի մը երկու յօդուածները՝ սրոնցմով ան՝ առանց անդրադառնալունոյն եկեղեցիին ստացման և առաջին վերաշնուրթեան պատմական բացատրութիւններուն և փոխանակ յիշելու եկեղեցւոյ բուն վաստակաւորը, կը կրկնէ այն սխալ վերագրումը որ հակասութիւն մէկ պատմական տուիքներուն։ Նոյն եկեղեցիին վաստակաւոր եկեղեցականին յիշատակը խզճի վրայ պարտք կը գնէ որ մենք վերանորոգենք քսան տարի առաջ լուսաբանուած պատմական կէտերը՝ որպէսզի երեքհարիւրամեակին առթիւ տօնակատարները ճշմարտութեան ճրագով լուսաղարդուին և կարենան խզճի մտօք պանծացնելու եկեղեցւոյ առաջին վաստակաւորը։

Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցիին ստացման և առաջին վերանորոգութեան մասին կը գրէ 1804 ին Հ. Պուկաս վրդ. Ինձինեան (տե՛ս Աշխարհագրութիւն Զորից Մասամց Աշխարհի, հատ Ե. էջ 129-130) և կը յարէ թէ նոյն եկեղեցիին ստացումը և վերանորոգութիւնը կատարած է Գրիգոր պատրիարք Պարոնտէր, ըստ պատմութեան իր յիշատակարանին։ Աստուածատուր եպ. Տ. Յովհաննէսեան ևս նոյնը

մանրամասն կը կրկնէ (տե՛ս Երուսաղէմի Պատմութիւն, Ա. հատ. էջ 306-311) եկեղեցւոյ ստացման և վերաշնուրթեան գործը բացէ ի բաց վերազրելով Պարոնտէր պատրիարքի՝ զանիկա նկատելով իր հեղինակ ծանօթ յիշատակարանին։ 1901 ին Հրանդ Աստուր Ազգ. Հիւանդանոցի ընդգարձակ Օրացոյցին մէջ (էջ 91-92) Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները խորագրով ուսումնասիրութեամբ կը ծանօթացրէ միւնոյն իմաստով և կը յարէ թէ Գրիգոր Պարոնտէր պատրիարքի յիշատակարանին բնագիրը կը զանուի էջմիածնի մատենադարանը և անոր օրինակը պահուած է Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցին։

Նոյն թուականին է որ վերջապէս այս յիշատակարանին ամրողջական մէկ օրինակը կը հրատարակէ օթոստիւն» (Տր. Վ. Թորգոմեան), իր ունիցած մէկ ընդօրինակութենէն, որ գրուած էր իր 1796 ին (տե՛ս Բանակը, 1901, էջ 148-153)։ Յիշատակարանին վերնագիրը կը կրէ հետեւեալը։ Գրիգոր վարդապէս ունե որ զանենայն անց յւր եւ զենաւալն զիրք մի և շարադրեալ, վասն Պալատու եկեղեցւոյն այսպէս զրէ։ Յիշատակարանիս ընդօրինակողը Գրիգոր վարդապէտի մասին ձեռագրին վերջը կը գրէ հետեւեալ տեղեկութիւնը։ Այս Գրիգոր վարդապէտս, որ պատմեալ է զեկեղեցւոյն մերմէ սրբոյ Հրեշտակապետին Միքայէլի, որ ի թաղն Պալատուն հստամպոււ, է Գրիգոր Պարոնտէր ասացեալն, որ յիտոյ եղեալ է պատրիարք Երուսաղէմի, և այր զործունեայ և երկիւզածու Բատ Հ. Գ. Գոլէմքարեանի, սոյն Յիշատակարանին ընդօրինակողն է Սարգիս Սարաֆ Յովհաննէսեան դպիրը (տե՛ս Հանդ. Ամս. 1911, էջ 14)։ Յիշատակարանը ընդգարձակօրէն կը խօսի նէօմրիւկի Ս. Նիկոլայս եկեղեցւոյն ընդգարձակման և մըզկիթի վերածման, Պալաթու Ս. Հրեշտակապետի ստացման ու վերաշնուրթեան մանարամասն պարագաներու մասին։

Ինչպէս տեսնուեցաւ վերև, Պալաթու եկեղեցիին յիշատակարանին վերնագիրին մէջ յիշուած Գրիգոր վարդապէտ 1795ի ընդօրինակողը կը հասկնայ ու կը ճանչնայ Երուսաղէմի Գրիգոր Պարոնտէր հռչականուն պատրիարքը և ըստ այնմ ու իր ձե-

ուազրին մէջ կը ծանօթազրէ . ահա այդ թօւականէն սկսեալ իսկական հեղինակ Դրիգոր վարդապետին անունը կը փոխուի Դրիգոր Պարոնտէր պատրիարքին , եւ բռլոր ականաւոր զրիչներ , ինչպէս վերոշիշեալներ և ուրիշներ , յիշատակուրանին հեղինակը չփոթումով կը կարծեն Դրիգոր Պարոնտէր պատրիարքը :

«Դրիգոր վարդապետ ոմն»ը Դրիգոր պատրիարք Պարոնտէրը չէր սակայն : Յիշատակարանին ընդօրինակողը զրչի հարուածով մը զարէ մ'աւելի յիշատակարանին բուն հեղինակը և երկու եկեղեցիներու մեծ գործիչը զրկոծ է իր իրաւունքն . բայց յայտնի խօսք է թէ ճշմարտութիւնը չի ծածկուիր : Ս. Աթոռոյս մատենադարանապետ Գեր . Տ. Մեսրոպ Ս. եպ . Նշաննան արտայայտուած փափաքներու վրայ նախ մասամբ , յետոյ 1915 ին սուբողջապէս կը հրատարակէ «Գրիգոր վարդապէս Կամախինցոյ կամ Դարանացոյ ժամանակարուրինը , որուն մէջ կ'երեայ յար և նման ու գրեթէ բառացի բռվանդակութիւնը Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Գրիգոր Պարոնտէր կարծեցեալ հեղինակին յիշատակարանը : Ահա այս հրատարակութեան վրայ սխալը ուղղուեցաւ ու Գրիգոր վարդապետ Դարանացիին վերադարձուեցաւ ոիր իսկ հեղինակութիւնը և արգիւնաւոր բարեգործութիւնը , դոր մ'անկէ զրկուելէ ետեւ ինչպէս կը զրէ Հ. Գ. Գալէմքեարեան իր յօպուածներուն մէջ (տե՛ս Հանդ . Ամս . 1911 , էջ 15) :

Վեքներս , 1931 սեպտ . 5 և 9 թուականներով Հալէպի եփրատ օրաթերթին մէջ Դարաւոր Ակեղեցի մը կ . Պոլոյ մէջ խռագրով Հալէպի բարեկան Առաջնորդ Գեր . Տ. Արտաւագդ Ս. եպ . Սիւրմէեան գրած էր երկու յօդուածներ , որոնց ոճը արդարենկարագեղ և բռվանդակութիւնը խանդավառ զգացումներով . բայց Պալաթի Ս. Հրեշտակապետի եկեղեցւոյն ստացման և առաջն վերաշնութեան նկատմամբ լուսաբանուած հրատարակութիւններ , կամ ի ձեռին չունենալուն և կամ անոնց չանդրագառնալովը ան կ'իյնայ այն միւնոյն սխալին ու շփոթումին մէջ որով Գրիգոր վարդապետ Դարանացիին մէծագործութիւնը և յիշատակարանին հեղինակութիւնը , ինչպէս իր տողերէն կը հասկցուի :

կը վերագրէ Գրիգոր պատրիարք Պարոնտէրին և վերջնոյս կը հազցնէ փառքի ծլրանի մը , որուն կարօտ չէ արդէն մէծագործ պատրիարքը վասն զի ան չպիտի սիրէ որ Հայաստանցի անձնուեր վարդապետի փառքը ու գործը իրեն ընծայուի , ընդորինակողի մը սխալին հետեանքով : Տ. Արտաւագդ սրբազնն իր արթնամտութեամբը անտարակոյս պիտի անդրագառնայ սրբազնուած սխալին՝ որուն մէջ ինկած է վերջին ժամանակներուն այդ խընդորոյն չուրջ հրատարակուածները հաւատար իր մօտը չունենալուն համար :

Պալաթցի մեր հայրենակիցները յառաջնկայ նոյեմբերին իրենց Ս. Հրեշտակապետ եկեղեցիին երեքհարիւրամժեակը պիտի տօնեն . ուրիխալի նշան մ'է աս , և ապացոյց անոնց բարեպաշտութեան : Այս պարագան ինձ համար ասիթ մը կը նկատեմ և կը փափաքիմ թարմացնել իրենց յիշողութիւնը թէ Ս. Նիկողոյս եկեղեցիին վաղեմի յիշատակներով . և թէ Պալաթի Ս. Հրեշտակապետի ստացման և վերաշնութեան նկարագրութեամբ , նաև այն պատմական պարագաներով որոնց իսկական հեղինակն ու զլխաւոր զործիչն է Գրիգոր վարդապետ Դարանացին : Այս պատմական կէտերը պիտի քաղենք նոյն իսկ յիշեալ վորդապետին ժամանակագրութեանէն և ստուգապատում հեղինակներէ :

Սուլթան Մէհմէմմէտ Բ. կայսրը որ 1475 ին կը զրաւէ Թէֆէ (Խրիմ) քաղաքը , անկէ կը փոխազրէ ուրիշներու հետ նաև Հայեր որոնք կը բնակին կտիրնէ Գափուսիին և Թէֆիլ Մէրայիին միջն , Դարակէոմբիւկին մօտ , և կայսրէն կը խնդրեն եկեղեցի մը : Կայսրը կը շնորհէ Հայոց թաղը գանուած վանք մը , որ բիւզանդական շրջանէն մեացած և ամայացած էր , և ան կը կոչուէր աՄանուկի Մենաստան անուամբ : Թէֆէէն փոխազրուած Հայերը և Լատինները այս եկեղեցիին տիրացան կայսեր հըրամանաւ , կէսը հայոց և կէս լատինաց ըլլալու պայմանաւ :

Հաս Բասրատի և Մորգմանի , Մանուէլի վանքը թէսփիլոս և Միքայէլ Գ. կայսրերու ժամանակ շինուած է Արեւելեան բանակի հրամանատար Մանուէլի կողմէն : Պատրիարքը նորոգեց զայն , և ընդարձակեց : Միքայէլ Տուքաս կայսրը երբ գա-

հընկեց ըլլալով (1078) Եփեսոսի արքեպոսածունագրուեցաւ, իր կենաց վերջին օրերը անցուց Մանուէլի վանքին մէջ։ Այս եկեղեցին Մէհմէմէտ Բ. էն շնորհուեցաւ Թէֆէն փոխադրուած Հայոց (տե՛ս *Souvenirs Chrétiens de Constantinople et des Environs*, էջ 67, Edmond Bouvy)։ Այս պատմական պարտպան կը հերքէ Տ. Արտաւազդ սրբուազանի վերև յիշուած յօդուածներուն մէջ արտայայտած իր սա վարկածը թէ սրբուազանգական կայսրերու թուլլուութեամբ, Հայոց տրուած փոքր եկեղեցի մը ըլլայ այդ (Ս. Նիկողայոս եկեղեցին) և ոչ թէ մասնաւորաբար շնորհած ևլու։ Բիւղադացի կայսրերը չեն որ Հայոց կու տան այս եկեղեցին, այլ Օսմաննեան կայսեր հրամանաւ Հայք և Լատինք կը ստանան Մանուէլի վանքը ու անոր եկեղեցին կը վերակռչեն Ս. Նիկողայոս։ Պատմութեան նայելով հայոց բաժինը շատ նեղ և փոքր եղած է։

Հայաստանցի վարդապետ մը՝ Գրիգոր Դարանաղի (1576-1643) անուամբ, անձնուէր եկեղեցական մը կամախէն Պոլիս պալով, իջևանած է Կէօմըրիւկի Ս. Նիկողայոս եկեղեցին։ Թիշեալը իր Ժամանակագրութեան մէջ կը պատմէ նոյն եկեղեցիի մէջ իր կողմէն կատարուած նորոգութիւնները։ Իր օրովը բոլորովին պայցտացած ու ընդուրձակուած է ան, և սպասներով զարդարուած։ Հայերը, կը զրէ, յաջողած են վարձու առնել լատինաց յարակից շնորհերն ու պարտէզները, այնպէս որ Հայոց վիճակը շատ նախանձելի դարձած է։ Դարձեալ նոյն ժամանակագրութեան կ'իմանանք թէ Դարանաղին իր Աստուածաշաշունչի ձեռապրին ընդօրինակութեան մէկ մասը Ս. Նիկողայոսի եկեղեցւոյն մէջ կատարած է։ Դարանաղին պաշտօնի բերմունքով երբ ճամբորութիւններէն կը վերագունաբր՝ կ'իջևանէր միշտ Ս. Նիկողայոս եկեղեցին։ Բայց թիշեալը առաջ կը զուրուած է անձնաբերութեան և ընդարձակման համար Տիվրիկցի Պոլազօլի։ Աստուածատուր անուն հանճարեղ անձնաւութիւններին մը վերստին հրաման կը ստանայ, և կը յաջողի մեծ աշխատանքով ձեռք բերէլ եկեղեցւոյ պաշտօնական վաւերագիրները։ Այս ձեռնարկին նկատմամբ, ըստ Ժամանակագրութեան, կ'ինաստան զըսնուող կեսարացի պատրիարքին տեղակալները կը հակառակին Արիստուկէս վարդապետին և կը հալածեն զանիկա, «որ զօդեալ կայը ի նոցանէ ի Դալաթիա, ի նոցին չար խորհրդոցն»։

Այս միջոցներուն Գրիգոր վրդ. Դարանաղին՝ որ ուխտի գացած էր երուսաղէմ, կը վերադառնար, Պալաթցիք լսելով անոր վերադարձը, Ակիստուրի մէջ կը զիմաւորեն զանիկա և կը պատմէն եղելութիւնները։ Դարանաղին կը յորդորէ զանոնք «ի շինութիւն եկեղեցւոյն որ յանուն Միքայէլ Հրեշտակապետին է»։ և Խասպիւղ շատ ցուրտ բանքեր շատ կ'ասէ եւ կու յուսահատէ զնոսսա...»։ Թէ՛ Կեսարացին և թէ՛ Խուլը, երկու մրցակից պատրութիւններ, բոլորովին անփոյթ մալով։ Ս. Նիկողայոսը վերջնականապէս մզկիթի կը վերածուի, և տեղւոյն Հայերը և քահանայք զրիթէ մէկ տարի անտէրունչ և անփարախ կը միան «որպէս ոչխոր կորստական»։ Այդ միջոցին յուսալքուոծ մողովուրդն ու քահանայք Պալաթի դրան ներքեւ Հրեշտակապետ անուամբ խափանուած եկեղեցի մը կը գտնեն կէս մզոն հնուաւորութեամբ, Հրէից թաղին մէջ, խաւարչուտ տեղ մը՝ զոր կը չանան հոռոմներէն առնել։ Նոյն միջոցին Պուրսայէն Պոլիս կու գայ Խարբերցի Արիստուկէս վարդապետը, որուն կը զիմեն՝ որպէս զի այս զործը յառաջ տանի։ Արիստուկէս վրդ. յանձն կ'առնու, քահանայից հետ Խասպիւղ կ'երթայ և կը յորդորէ մողովուրդը որպէս զի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ ստացման համար զրամ հաւաքնն։ Վարդապետը կը յաջողի և մէճէպ փաշան Հայոց հրամանաւութիւն կամախէն Պոլիս կու տայ եկեղեցիին տիբանատու։ Պետական հրամանով Ս. Հրեշտակապետը կը յանձնուի և կը տրուի Հայոց, ի մեծ ուրախութիւն մողովզեան և քահանայից։ Այս միջոցին թէկ հոռոմները կը շարժին ետ առնելու եկեղեցին, բայց ի զուր։ Ս. Հրեշտակապետի նորոգութեան և ընդարձակման համար Տիվրիկցի Պոլազօլի։ Աստուածատուր անուն հանճարեղ անձնաւութիւններին մը վերստին հրաման կը ստանայ, և կը յաջողի մեծ աշխատանքով ձեռք բերէլ եկեղեցւոյ պաշտօնական վաւերագիրները։ Այս ձեռնարկին նկատմամբ, կ'ինաստան զըսնուող կեսարացի պատրիարքին տեղակալները կը հակառակին Արիստուկէս վարդապետին և կը հալածեն զանիկա, «որ զօդեալ կայը ի նոցանէ ի Դալաթիա, ի նոցին չար խորհրդոցն»։

կը մեկնիւ Ան իր ժամանակագրութեան մէջ (էջ 189) կը զրէ . «Եւ ես եւ Արխատակէս վարդապեան վերակացու լինելով նուցա և յօժանզակութիւն առնելով ըստ կարողութեան մերոյ յամենայն պիտոյից՝ մինչեւ կատարեցաք աջողելով Տեառն, և օրհնեցաք նաւակատիս առնելով մեծահանդէս տօնիւք» : Եւ եթող Արխատակէսն և գնացի կողմն Բիւթանիոյ» :

Քարնի մը օրէն հրդեհ մը կը ծագի և կ'այրին եկեղեցին և յարակից շէնքերը, ինչպէս նաև Նրէից այն տունները որ եկեղեցւոյն կից էին և շատ մօտ եկեղեցւոյն շատ մօտ էր նաև անուանի հոսոմի մը տունը՝ որ բարձր էր եկեղեցիէն, և ուրուն վրայ նոյն տունէն եկեղեցիին տանիքը կը թափէին սոխի, սեխի և պատուզի կեղեններ և այլն, ի միծ զայթակղութիւն հաւատացելոց։ Հրդեհը լափեց նոյն շէնքերն ալ և անոնց հետքը չթողուց եկեղեցիին շրջապատը այրեցաւ, սեղանը խորտակեցին այլակրօն դրացիները, կղմինտորները փառցուցին և միայն առաստաղը ազատուեցաւ։ Դարանազցին Դալաթիա կը զանուէր նոյն ժամուն, ան հրդեհին վայրը երթաւով կը քաջալիք ժողովուրզը և կը յուսուզորէ հրդեհուած եկեղեցին վերստին շինելու վարդապետը այս սրտապնդումներէ յետոյ Ասսպիւղ Ակնցիներուն մօտ կ'երթայ ու անոնցմէ ի նպաստ եկեղեցւոյ շինութեան կղմինտը կը հաւաքէ . մէկ կը դմինտը այն ատեն մէկ ոսկի էր . երեք օրուան մէջ տասներկու հազար կղմինտը կը հաւաքէ ու ծածկել կու տայ եկեղեցիին տանիքը, որուն վրայ զրացիները կը նախանձին ու սպառնալիք կ'ընեն արզիլերու եկեղեցւոյ վերաշխնութիւնը։ Հայերը կուսակալէն կրկին հրաման ստանալով դրացիներ կը լուեն։ Այս լափիլող հրդեհէն վերջ կը շինուին եկեղեցիին շրջապատը, փողոցը, խուցը, սմիջին խախտածքները, և սեղանը գարձեալ կը վերահաստատուի։ Եկեղեցւոյն շուրջի սենեակները ընդարձակելու ժամանակ երբ պեղումներ կը կատարեն՝ հողին տակէն գմբէթ մը կը բացուի, և երբ նոյն գմբէթին գուտիր հազիւ կը բանան, հողով և քարով լեցուած շինուածք մը կը գտնուի . նոյն տեղը չորս բանւորներ հազիւ ինն օրէն կը կարողանան մաքրել:

Դարանազցին կը շարունակէ ըսկելով թէ՝ երբ գլխաւոր շինութիւնները կ'աւարձարին, քահանանները կը շտապին սեղանը օրհնելու . անոնք փոյթ չէին ընկը վերընալին օրհնելու և օծելու խաչ ու պատկեր և սեղանին խախտեալ անդերը, ինչպէս զրուած է Մայր Մաշտոցին մէջ . «Ես զիտացի թէ Աստուածոյ համար կու փութացուացնէնին, այլ վասն խրեանց ագահութեան ամառ առաջին շինութիւնու նոյն շէնքերը, մշակներու վարձքն ու հացը ապասիկ առնուած է, «Ղաւ աջահամբոյր տայք, որ վճարիմք ի պարտուց խնդրուացն»։ Վարդապետը կը լսէ թէ իր խօսքերը զգուհութիւն և խոսվութիւն յառաջ բերած են ժողովուրդին մէջ, փոխանակ հաճութեան . ուսափ աջհամբոյրի պընակը մէկզի կը զնէ ու ժողովուրդն ալ բան մը չվճարած կը մեկնի . ու Դարանազցին ի վերջոյ կը յարէ հետեւեալ խօսքերը . «Եւ դարձան ամեններեան քահանայքն կատաղեալ բարուք, զիմեցին ի վերայ իմ լըրբենի երեսօք, հայհոյեցին փոխանակ չնորհակալութեանն և վիրաւորեցին սրտիւք և ելեալ խոսվութեամբ գնացաք ի Դալաթիայ» :

Այսպիսի չարութեամբ վճարեցին այսքան փոխարէն բազում երախտեաց մերոց» :

Գրիգոր վրդ . Դարանազցիին անձը լիովին ճանչցուեցաւ իր քրտանց երկը եղող Փամանակագրութեան հրատարակութեամբը, նոյն վարդապետը տասնեօթներորդ գործառաջին քառորդէն մինչև նոյն դարու կիսուն հայ ժողովրդեան, մանաւանդ գաւառի հայութեան մեծագոյն գործիչը եղած է, ու կարեսը գեր մը կատարած է նոյն ժամանակ տեղի ունեցող զաղթականական գործերու մէջ և միջամուխ եղած է նուև Պատրիարքարանի գործերուն կարգադրութեանց առթիւ . Երուսաղէմի մէջ ալ ունի յիշատակներ, որոնց ամենէն կարեսըն է իր ընդօրինակած ձեռագիր Աստուածաշունչը, զոր երջանկայիշատակ Մազաքիա արքեպս . Օրմանեան յիշատակած է Ս. Ա.

թռույ, իր իր սեպհականութիւնը։ Դարանաղցին Ս. Նիկողայոս եկեղեցւոյն մըզկիթի վերածման թուականին՝ երրորդ անգամ ըլլալով երուսաղէմ կը գտնուեր 1625-1628 թուականներուն։

Վերև տեսանք այն կարեոր ծառայութիւնը զոր Դարանաղցին կատարեց Ս. Նիկողայոս եկեղեցւոյն ընդարձակման և վերանորոգութեան կարեոր զործին մէջ, ինչպէս ինքը կը վկայէ թէ՛ իր երկասիրութեան ու թէ իր խոյ ձեռքովը զրած ու Ս. Հրեշտակապետ պահուած Յիշատակաւրանին մէջ։ Այդ անձնուեր եկեղեցականին թէ՛ կէսօմբիւկի և թէ Պալաթու այս երկու եկեղեցիներու նորոգութեամբ ու ստացման ձանր գործով զրազած ու սատարած ըլլա-

լով՝ Ս. Հրեշտակապետի երեքհարիւրամեակը զեղեցիկ առիթ մ'է անոր կոտրած սրտին իր թեթեացում պատշաճ տօնաւկատարութեամբ մը պանծացնել անոր յիշատակը։ մասնաւորապէս Պալաթու քահանայական դասու մասնակցութեամբ առօթել անոր հոգւոյն հանգստեան համար և այս երեքհարիւրամեակին առթիւ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ զաւթին մէջ կամ այլուր քանդակազարդ խաչքար մը զետեղել, անոր վրայ արձանագրելով եկեղեցւոյ առաջին վերաշնութեան թուականին առթիւ վրդ։ Դարանաղցիին անունին հաւա։ Աս կ'ըլլայ արդար հասուցումը վաստակաւոր եկեղեցականին համար։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆԱԴԻՒՆԻ

ԼՈՒՍԱՅՐԻԿ ՎՐՈՅ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ ԵՒ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՌՆՁԵՑԻ ԿԱՔՈՂԵԿՈՍՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Իրազեկ ստորագրութեամբ վերջերս Յուսարեցի մէջ երեցան մի քանի բանասիրական գրութիւններ, Սպահանէն գրուած, մէծ մասամբ հայ ազատագրութեան շարժման սկզբնական ժամանակամիջոցին վերաբերեաւ։

Այս նկարագրով և ձգտումով ու Երկսին կը երեք անհիմ խորագրով Յուսարեցի Յուսու 10 թիւին մէջ հրատարակուած էր յօդուած մը։

Այդ յօդուածին մէջ երկու տեղ կը յիշատակուեր անունը Աւելիանոս Սալմաստեցի կաթողիկոսին որ ըստ յօդուածագրին տեսութեան պաշտօնավարած էր 1541—1547։

Արդ, քանի որ Իրազեկ զիտէ թէ Ստեփանոս Սալմաստեցի պատգամաւուրութեան մը գլուխը անցած ճամբորդած է զէպի Եւրոպա պետութեանց գուսները բացխելու իր հօտին փրկութեան համար, պէտք էր զիտնոր նաև անոր առաքելութեան թըւականը, որ եթէ ճշգած ըլլար անմիջապէս պիտի տեսնոր թէ իր տուած թուականները կը հակասեն այն պատմական անցքերուն որոնց ակնարկութիւն կ'ընէ ինքնու-

Մեզի անձանօթ կը մնայ թէ ի՞նչ աղբիւրէ քաղած է Իրազեկ իր տեղեկութիւնները, սակայն բացորոշ է թէ անոնց մէջ երկու կարեռը սիսակներ սպրդած են։

Անոնցմէ առաջինը Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսին պաշտօնավարութեան տեսողութիւնն է, որ ինքն նշանակած է 1541 էն 1547 և երկրորդը՝ այն որ կաթողիկոսը Եւրոպայէն դարձած է Հայաստանիր աթոռը և շարունակած իր պաշտօնը։

Օրմանեան իր Ազգապատումին մէջ Ստեփանոս Սալմաստեցիի պաշտօնավարութեան տեսողութիւնը 1541 էն մինչեւ 1567, քսան տարի աւելի կ'երկարածգէ, (տես էջ 2247) ասոր համար ներկայացնելով ընդարձակ փաստարկութիւններ, որոնք սակայն չեն ներկայացներ ունէ արժէք։

Օրմանեան ինքն ալ Իրազեկի պէս կը հաւատայ և կ'ընդունի թէ անիկա Եւրոպայէն ողջամբ դարձած է Հայաստան և իր պաշտօնը շարունակած։

Իրողութիւնը սակայն սա է որ Աւելիանոս Սալմաստեցի կաթողիկոս իր Եւրոպայի առաքելութիւնէն չէ կրցած ողջամբ դառնալ Հայաստան ինչպէս կը կարծին Զամիչեան, Օրմանեան և Իրազեկ։

Զարմանալի է որ Օրմանեան Ս. որ իր այդ մէծ աշխատութեան մէջ խղճամիտ քննութիւններով այնքան շփոթութիւններ և կնճիռներ լուծած է, այս կէտին մէջ ենթարկուած է, խոչոր շփոթութեան մը